№ 275 ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13 1902 ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13 № 275

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(31-Դ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱԾ **1903** ԹՒԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամէն օր, բացի տօներին յաջորդող օրերից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն եւ 8 ամսվանը՝ 8 ր., եօթ եւ վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. եւ մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնսկայա փողոցների անկիւնը), իսկ ԲԱԳԻՈՒՄ—Ն. Դաւթեանի մօտ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է գիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շրջանը լայնացել է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հսկայական վաճառատներ. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բէօրնստէրնէ-Բէօրնսօն. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ատրպատականում։

ՇՐՋԱՆԸ ԼԱՅՆԱՑԵԼ Է

Մեզ՝ ժամանակակիցներիս համար շատ օտարոտի է թւում, թէ ինչպէս անցեալ դարերում մարդիկ կարող էին ապրել առանց սերտ հաղորդակցութեան, առանց ամենօրեայ պօստի, առանց լրագրի, առանց անդադար շփումների։ Որպէս զի մի մարդ զաղափար ունենար, թէ ինչ է կատարվում իր հայրենիքի զանազան մասերում և արտասահմանում, նա պէտք է ամիսներ և տարիներ սպասէր, մինչև որ նոր մարդկանց հանդիպելով, կարող լինէր ցանկացած տեղեկութիւնները ստանալ, կամ պէտք է ինքը թափառէր տեղից տեղ և ծանօթանար երկիրների, մարդկանց և նրանց գործերի հետ։ Նոյն իսկ ամենամեծ ճանապարհորդները այն ժամանակ հնարաւորութիւն չունէին շատ բան գիտենալու, որովհետև ճանապարհները վատ էին և անապահով, մարդկանց կեանքը փակ էր և իր շատ մասերում անմատչելի դիտողութիւնների համար, չէր զարգացած առօրեայ խնդիրների հրապարակական քննութիւնը։

Բայց այն ժամանակ և կեանքի մէջ փոփոխութիւնները առհասարակ կատարվում էին շատ դանդաղ։ Մարդիկ և ամբողջ սերունդներ ապրում էին նոյն ներքին և արտաքին պայմանների մէջ և փոփոխութիւնների ենթարկվում էին միայն երկար շրջանների ընթացքում։

Այժմ, երբ հաղորդակցութիւնը արագացել է և մարդկանց միմեանց հետ շրփումը չափազանց զարգացել, երբ պօստի, հեռագրի և լրագրի միջոցով հնարաւոր է դարձել հետևել համաշխարհային եղելութիւններին և մատակից լինել խոշոր և ընդարձակ ձեռնարկութիւնների, երբ գրպրոցների, գրականութեան և տնտեսական աղդեցութիւնների շնորհիւ՝ կեանքը ենթարկվում է անդադար փոփոխութիւնների, մի այդպիսի ժամանակ պէտք է ամէն ջանք գործ դնել մի կողմից հետևելու այն ամենին, ինչ որ կատարվում է մեր շուրջը և մեզնից դուրս գտնվող աշխարհներում, իսկ միւս կողմից ձեռք առնել մի շարք միջոցներ չընկճվելու ջլատող սուր մրցութիւնից և իւրացնելու այն բոլոր կուլտուրական բարեմասնութիւնները, որոնք կարող են ապահովել ժողովրդի առաջադիմութիւնը և տնտեսական բարօրութիւնը։

Փակվել նեղ սենեակի մէջ, ինչպէս արել ենք դարեր շարունակ, սահմանափակվել ամենափոքր և եսական շահերով, կըզգիանալ հետաքրքրութեան և հարցասիրութեան անձուկ շրջանակի մէջ—այլ ևս մենք չենք կարող։ Մենք պէտք է շփվենք ուրիշների հետ, մեր կեանքը կապենք մեր շրջապատողների հետ, միասին քննենք և մշակենք մեր երկրի առօրեայ խնդիրները և միմեանց օգնենք՝ ընդհանուր ոյժերով առաջ տանելու երկրի զարգացման գործը, որ դարեր շարունակ կաշկանդված է եղել ամենապատ աղդեցութիւնների շնորհիւ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՍԿԱՅԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՏՆԵՐ

Ներկայ տնտեսական-քաղաքական կեանքում շատ մեծ դեր է խաղում վաճառանոցներ ունենալու հարցը։ Արագ հոսանքով կատարելագործվում է տեխնիկան, զարգանում է արդիւնաբերութիւնը, բազմանում են հմուտ մասնագէտները. բայց ինչ օգուտ այդ բոլորից, եթէ չը կան սպառողներ, եթէ չը ծախված ապրանքներով լցված են վաճառանոցները։

Արդիւնագործութեան ամենաէական շարժիչներից մէկն է վաճառանոցը։ Սրա պահանջների թելադրութեամբ են աշխատում գործարանները, սրա ելեւէջներով են առաջնորդվում գործարանատէրերը։ Որքան շատ, որքան շահաւէտ են վաճառանոցները, նոյնքան նպաստաւոր են նրանք երկրի արդիւնագործութեան ու առհասարակ տնտեսական կեանքի համար։ Ահա հէնց դա է դաղութային քաղաքականութեան հիմք կազմողը, դա է եւրոպական բուրժուազիային աշխարհի ամէն կողմերն ուղարկողը։

Նորանոր վաճառանոցներ ձեռք բերելու հարցը զբաղեցրել է և դեռ զբաղեցնում է եւրոպական պետութիւններից շատերին։ Դրա համար էր, որ Անգլիան այնքան արիւն հոսեցրեց Հարաւային Աֆրիկայում։ Դրա համար էր, որ մեծ պետութիւնները քանդեցին «չինական պատերը», բացին «փակ դռները»։

Սակայն դա արհեստական միջոց է։ Բացի դրանից տնտեսական կեանքում նկատվում է մի այլ երևոյթ, որ բնական ուղիով լայնացնում է վաճառանոցները, բազմացնում է սպառողների թիւը։ Դա մրցումն է, անվերջ ու անսահման մրցում։

Մրցման շնորհիւ իւրաքանչիւր գործարանատէր աշխատում է առաջ անցնել իր արհեստակիցներից։ Երբեմն ջանքերը տալիս են ցանկալի հետևանքը, այս կամ այն երջանիկ գործարանատէրը ունենում է աջողութիւն։ Բայց երկար չէ տևում այդ աջողութիւնը, որովհետև մրցումը շուտով ոտքի է կանգնեցնում նաև միւս գործարանատէրերին։ Սրանք էլ բարեփոխում են ապրանքները, սրանք էլ համապատասխան նորութիւններ են մտցնում իրանց գործարաններում և աջողութեան անիւը այլ ընթացք է ընդունում։ Իսկ այդ բոլորի վերջնական հետևանքն է լինում էժանութիւնը, որը և ամենի մեծ թւով մարդկանց հնարաւորութիւն է տալիս ձեռք բերելու այնպիսի ապրանքներ, որոնք սկզբում միայն սակաւաթիւ սպառողներին էին հասանելի իրանց թանգութեան պատճառով։

Այդ հանգամանքի աղդեցութիւնը ժողովրդի համար աւելի զգալի կը լինէր, եթէ արդիւնագործողների և սպառողների մէջ տեղը կանգնած չը լինէին միջնորդ — վաճառականները։ Շատ անգամ միմիայն սրանք են վայելում գործարանատէրերի մրցման արդիւնքը, իսկ բուն ժողովուրդը մնում է անմասն։ Պատահում են դէպքեր, երբ մի որ և է ապրանքից գործարանատէրը վաստակում է 5—10%, իսկ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

(Ուղևորի թռուցիկ տպաւորութիւններ)

Մակու

Երեկոյեան մեզ հրաւիրեցին Սարդարի մօտ։ Մեզ ուղեկցում էին մի քանի լապտերաւորներ։ Անցանք մի փոքր բակով, որտեղից նեղ ու ծուռ միջանցքներով մտանք բաւական ընդարձակ մի դահլիճ՝ կահաւորված կիսաարևելեան, կիսաեւրոպական ճաշակով։ Դրան մօտ մեզ դիմաւորեց ինքը Իգալը-Սալթանէն, Սարդարը, մօտ 36—37 տարեկան բարձրահասակ, թուխ, հիւանդոտ արտայայտութիւն ունեցող դեմքով մի մարդ։ Երևում էր, որ երիտասարդ ժամանակվայ վարած կեանքը իր դրոշմը թողել էր Սարդարի վրա։ Հագնված էր շատ պարզ, մի արխալուխ, վրայից ձգած ունէր զինուորականի վերարկու և գլխին պարսկական գդակ։ Մեզ հրավիրեց նստելու իր դէմուդէմը դրած աթոռների վրա, իսկ նրա աջ ու ձախ կողմերում կարգով շարեցին իր ազգական խաները, երկու խորհրդականը, որոնց մինիստր են անուանում և իր անձնական քարտուղարը, մի ծերունի, որի ամբողջ արխիւը զետեղված էր մի մեծ կաշէ պօրտֆանի մէջ և որը շարունակ ծոցի գրպանումը դրած՝ հետը մանէր ածում։ Դահլիճը, ուր մեզ ընդունեց Սարդարը, շատ պարզ էր կահաւորված. մենք սպասում էինք տեսնել գազել է և մարդկանց միմեանց հետ շրփումը չափազանց զարգացել, երբ պօստի, հեռագրի և լրագրի միջոցով հնարաւոր է դարձել հետևել համաշխարհային եղելութիւններին և մասնակից լինել խոշոր և ընդարձակ ձեռնարկութիւնների, երբ գրպրոցների, գրականութեան և տնտեսական աղդեցութիւնների շնորհիւ՝ կեանքը ենթարկվում է անդադար փոփոխութիւնների, մի այդպիսի ժամանակ պէտք է ամէն ջանք գործ դնել մի կողմից հետևելու այն ամենին, ինչ որ կատարվում է մեր շուրջը և մեզնից դուրս գտնվող աշխարհներում, իսկ միւս կողմից ձեռք առնել մի շարք միջոցներ չընկճվելու ջլատող սուր մրցութիւնից և իւրացնելու այն բոլոր կուլտուրական բարեմասնութիւնները, որոնք կարող են ապահովել ժողովրդի առաջադիմութիւնը և տնտեսական բարօրութիւնը։

Փակվել նեղ սենեակի մէջ, ինչպէս արել ենք դարեր շարունակ, սահմանափակվել ամենափոքր և եսական շահերով, կըզգիանալ հետաքրքրութեան և հարցասիրութեան անձուկ շրջանակի մէջ—այլ ևս մենք չենք կարող։ Մենք պէտք է շփվենք ուրիշների հետ, մեր կեանքը կապենք մեր շրջապատողների հետ, միասին քննենք և մշակենք մեր երկրի առօրեայ խնդիրները և միմեանց օգնենք՝ ընդհանուր ոյժերով առաջ տանելու երկրի զարգացման գործը, որ դարեր շարունակ կաշկանդված է եղել ամենապատ աղդեցութիւնների շնորհիւ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՍԿԱՅԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՏՆԵՐ

Ներկայ տնտեսական-քաղաքական կեանքում շատ մեծ դեր է խաղում վաճառանոցներ ունենալու հարցը։ Արագ հոսանքով կատարելագործվում է տեխնիկան, զարգանում է արդիւնաբերութիւնը, բազմանում են հմուտ մասնագէտները. բայց ինչ օգուտ այդ բոլորից, եթէ չը կան սպառողներ, եթէ չը ծախված ապրանքներով լցված են վաճառանոցները։

Արդիւնագործութեան ամենաէական շարժիչներից մէկն է վաճառանոցը։ Սրա պահանջների թելադրութեամբ են աշխատում գործարանները, սրա ելեւէջներով են առաջնորդվում գործարանատէրերը։ Որքան շատ, որքան շահաւէտ են վաճառանոցները, նոյնքան նպաստաւոր են նրանք երկրի արդիւնագործութեան ու առհասարակ տնտեսական կեանքի համար։ Ահա հէնց դա է դաղութային քաղաքականութեան հիմք կազմողը, դա է եւրոպական բուրժուազիային աշխարհի ամէն կողմերն ուղարկողը։

Նորանոր վաճառանոցներ ձեռք բերելու հարցը զբաղեցրել է և դեռ զբաղեցնում է եւրոպական պետութիւններից շատերին։ Դրա համար էր, որ Անգլիան այնքան արիւն հոսեցրեց Հարաւային Աֆրիկայում։ Դրա համար էր, որ մեծ պետութիւնները քանդեցին «չինական պատերը», բացին «փակ դռները»։

Սակայն դա արհեստական միջոց է։ Բացի դրանից տնտեսական կեանքում նկատվում է մի այլ երևոյթ, որ բնական ուղիով լայնացնում է վաճառանոցները, բազմացնում է սպառողների թիւը։ Դա մրցումն է, անվերջ ու անսահման մրցում։

Մրցման շնորհիւ իւրաքանչիւր գործարանատէր աշխատում է առաջ անցնել իր արհեստակիցներից։ Երբեմն ջանքերը տալիս են ցանկալի հետևանքը, այս կամ այն երջանիկ գործարանատէրը ունենում է աջողութիւն։ Բայց երկար չէ տևում այդ աջողութիւնը, որովհետև մրցումը շուտով ոտքի է կանգնեցնում նաև միւս գործարանատէրերին։ Սրանք էլ բարեփոխում են ապրանքները, սրանք էլ համապատասխան նորութիւններ են մտցնում իրանց գործարաններում և աջողութեան անիւը այլ ընթացք է ընդունում։ Իսկ այդ բոլորի վերջնական հետևանքն է լինում էժանութիւնը, որը և ամենի մեծ թւով մարդկանց հնարաւորութիւն է տալիս ձեռք բերելու այնպիսի ապրանքներ, որոնք սկզբում միայն սակաւաթիւ սպառողներին էին հասանելի իրանց թանգութեան պատճառով։

Այդ հանգամանքի աղդեցութիւնը ժողովրդի համար աւելի զգալի կը լինէր, եթէ արդիւնագործողների և սպառողների մէջ տեղը կանգնած չը լինէին միջնորդ — վաճառականները։ Շատ անգամ միմիայն սրանք են վայելում գործարանատէրերի մրցման արդիւնքը, իսկ բուն ժողովուրդը մնում է անմասն։ Պատահում են դէպքեր, երբ մի որ և է ապրանքից գործարանատէրը վաստակում է 5—10%, իսկ

անցկացրինք այսօր. դուք պիտի վաղօրօք ինձ իմաց տայիք ձեր գալուստը, որպէս զի ես ձեզ վայել պատրաստութիւնը տեսնէի. դուք ինձ կը ներէք, եթէ այսօր որ և է պակասութիւն նկատած լինէք,—յայտնում էր իր հոգածութիւնը դէպի մեզ Սարդարը։

Մենք արևելեան սովորութեան համաձայն մեր գոհունակութիւնը յայտնեցինք, որ շնորհիւ մեծ խմանի մենք ապահով ենք եկել և ոչ մի նեղութիւն կամ կարիք չունենք։

Այնուհետև սկսվեց խօսակցութիւն զանազան խնդիրների մասին։ Պատմեց Սարդարը իր Եւրոպայում արած ճանապարհորդութիւնից, իր հիւանդութեան մասին, գերմանացի բժիշկների մասին, թէ նրանք որքան հմուտ են, որ այժմ իսկական բժիշկների միայն Գերմանիայում և Թիւրքիայում կարելի է պատահել. ապա խօսակցութիւնն անցաւ Մակուի բնակիչներին, և վերջում Սարդարը յայտնեց, որ Մօսկվայից ուղում է երեխաների համար ուսուցչուհիներ բերել տալ և փորձ պիտի իր քաղաքում էլ դպրոց բանալ։ Խօսակցութիւնից յետոյ հրաւիրեց բժիշկ Փաշայեանին, որպէս զի քննել տար, թէ արդեօք իր հիւանդութիւնը բոլորովին անցել է (նա թոքախտ էր ունեցել)։

Սարդարի դուրս գնալուց յետոյ նրա մինիստր-խորհրդականը քաշվեց մի անկիւն և սկսեց իր նամազը, իսկ քարտուղարը ծոցից հանեց գործերի արխիւը և սկսեց ինչ որ թղթեր գրել և կնքել. մնացած խաներն էլ սկսեցին օրվայ նորութիւնները միմեանց հաղորդել, որ գլխաւորապէս պտտվում էր Սարդարի ինչ որ ազգական խաների շուրջը, որոնք Թէհրան, գանգատ են գնացել Սարդարի դէմ։ Ներկայ խանի հօր մահից յետոյ խռովութիւն է ընկնում սրա և իր հօրեղբօր տղաների մէջ սարդարութեան համար. յաղթութիւնը սա է տանում, որից յետոյ թշնամանում են միմեանց հետ. յաղթվածներից յատկապէս մէկը գնացել է Թէհրան բողոքելու, որ Սարդարը իրանց հալածում է, ուզում է սպանել, իսկ այս կռիւներից շատ լաւ օգտվում է Թէհրանի արքունիքը և երկու կողմից էլ քամում է կարգին։ Մեր գնալուց մի շաբաթ առաջ էր հեռացել Շահի մամուրը (թագաւորի ներկայացուցիչ), որ Սարդարից տարել էր մի քանի հազար թուման իբրև նուէր։ Այս ներքին կռիւները բաւական թուլացրել են Մակուն և կառավարութեան ազդեցութիւնը ուժեղացրել. առաջ Մակուն շատ քիչ կախում ունէր կառավարութիւնից, իսկ այժմ գրեթէ այս կիսանկախութիւնը լրկ անուանական է մնացել։

Ասում են, որ այս Սարդարը այնքան էլ չէ ախորժում, որ եւրոպացիները ուսումնասիրեն իր երկիրը. կարծում է, որ դրա տակ ինչ որ յետին մտքեր են թաքնված. ով գիտէ, գուցէ կը ծանօթանան իրերի հետ և մի գեղեցիկ օր սիրուն Մակուն կարող է ձեռքից գնալ։ Կարծեմ սա է գլխաւոր պատճառը, որ պօստ, հեռագիր չէ մտցնում Մակուում. մէկ էլ, որ չէ ցանկանում իր երկրի անցած դարձածը իմացվի ուրիշ տեղերում։ Սա ճանապարհորդների վրա այնպէս է նայում, որպէս եւրոպական մի որ և է պետութեան ծպտեալ ագէնտի վրա։ Ի նկատի առնելով Պարսկաստանի ներկայ դրութիւնը. սարդարին կարելի

ճարպիկ վաճառականը—100—150%. գործարանատէրը ամեն կերպ աշխատում է էժանացնել իր ապրանքը, որպէս զի աւելացնէ սպառողների թիւը և դրանով լայնացնէ իր գործունէութեան ասպարէզը, իսկ վաճառականը ընդհակառակը թանգացնում է այդ գինը, ապրանքի իսկական արժէքի վրա աւելացնելով մի խոշոր գումար, իբրև վարձատրութիւն իր կատարած դերի։ Այդ աննպաստ երեկոյթի դէմ ներկայումս կռուում են մի կողմից «սպառող ընկերութիւնները», որոնց մասին արդէն առիթ ենք ունեցել խօսելու «Մշակի» էջերում, իսկ միւս կողմից «հսկայական վաճառատները», որոնք կամաց-կամաց ճնշում, անհետացնում են մանր վաճառականներին։

Այդպիսի վաճառատների բուն հայրենիքը Ֆրանսիան է, որտեղ նրանք գոյութիւն են ստացել դեռ քառասնական թուականներից։ Դրանց ամենամեծ զէնքը խոշոր դրամագլուխն է, մի զէնք, որի դէմ միանգամայն անզօր են մանր վաճառականները։ Հէնց այդ է պատճառը, որ «հսկայական վաճառատների» մօտ գրտնված մանր խանութները ժամանակի ընթացքում հալվում-անհետանում են ճիշտ այնպէս, ինչպէս որ ձիւնը արեգակի տաք ճառագայթներից։

Թէ որքան լայն է այդպիսի վաճառատների գործունէութիւնը – այդ մասին գաղափար կարելի է կազմել հետեւեալ թուերից։ Դեռ 1890 թ. Պարիզի «Bon Marché» վաճառատան հիմնական դրամագլուխն էր 20,000,000 ֆրանկ, պահեստի դրամագլուխը 22,000,000 ֆրանկ, իսկ տարեկան շրջանառութեան ամբողջ գումարը 135,000,000 ֆր.. նրա տարեկան բոլոր ծախսերը հասնում են 130,000,000 ֆրանկի, որից 17,000,000 ֆր.—ծառայողների վարձատրութիւն, 5,000,000 ֆր.—յայտարարութիւնների և այլն։ Նա ունի սեփական ոստիկանութիւն, բազմաթիւ թարգմանիչներ, նամակատարներ, ապրանքատարներ և այլն։

Մեծութեան կողմից «Bon Marché»-ից յետ չեն մնում «Louvre» Պարիզում, և «Les deux passages»-ն ու «Le grand Bazar»-ը Լիոնում։ Նոյնանման ունիվերսալ վաճառատներ կան նաև ուրիշ քաղաքներում։

Լոնդոնում նշանաւոր են՝ «Civil service sypply» association և «The army and navy cooperative society» վաճառատները, որոնցից իւրաքանչիւրի դրամագլուխը հասնում է 5,000,000 րուբլու, իսկ զուտ արդիւնքը՝ 2½—3 միլիոն րուբլու։ Նոյնպիսի խոշոր վաճառատներ կան նաև Լիվերպուլում ու ուրիշ քաղաքներում։

Գերմանիայում համեմատաբար ուշ են գոյութիւն ստացել «հսկայական վաճառատները», բայց չը նայելով այդ հանգամանքին՝ նրանց քանակը այժմ մի պատկառելի թիւ է կազմում։ Այդտեղ 1891 թ. միայն 2—3 հատ էին հսկայական վաճառատները, իսկ 1899 թ.ին—մօտ 500, որոնց մէջ ամենայն իրաւամբ առաջին տեղը բռնում են Tietz-ի և Wertheiw-ի վաճառատները Բերլինում։ Հասարակ խանութներ, սովորական տներ չեն դրանք, այլ մէկ-մէկ ապարանք՝ քաղաքի ամենալաւ, ամենաբազմամարդ մասում շինված։ Tietz-ի վաճառատունը բռնում է 5,000 քառակուսի մետր տարածութիւն և լուսաւորվում է 100.000 պատի և 1000 կախովի էլէքտրական լոպտերներով. նրա արժէքն է միլի ապրանքների հետ միասին—13,000,000 մարկ։ Wertheim-ի վաճառատունը աւելի մեծ է. նա բռնում է 7,800 քառակուսի մետր տարածութիւն և արժէ 17,000,000 մարկ։ Օրվայ որ ժամանակն ուզում էք մտէք այդ վաճառատները և դուք միշտ կը տեսնէք այնտեղ խուռն բազմութիւն։ Հազարաւոր գործակատարուհիները հազիւ են կարողանում բաւարարութիւն տալ անթիւ—անհամար գնողներին։

Նոյն տիպի վաճառատներ կան նաև ուրիշ երկիրներում՝ Իտալիայում, Աւստրիայում և այլն, Իսկ Ռուսաստանում յայտնի է Մոսկվայի «Мюръ и Мерилизъ»-ը։

Եթէ մի քանի խօսքով բնորոշելու լինենք «հսկայական վաճառատների» յատկութիւնը, պէտք է ասենք հետեւեալը. դրանք բոլորն էլ աչքի են ընկնում իրանց արտասովոր մեծութեամբ և ապրանքների բազմազանութեամբ։ Դրանց մէջ դուք կը գտնէք այն ամենը, ինչ որ արժէք ունի, ինչ որ կարող է վաճառահանվել՝ ուտելիքի, վառելիքի, հագնելիքի, խաղալիքի, զուարճալիքի, արդ ու զարդի բոլոր տեսակները, տպագրութեան, երաժշտութեան, նկարչութեան պէս-պէս արտադրութիւնները և այլն և այլն։ Անգլիական վաճառատներում կան նաև այգիներ, զբօսարաններ, ախոռներ, ապրելու տներ ու գերեզմանոցներ։ Ամերիկական մի վաճառատուն բաւական խոշոր պրեմիա նշանակեց այն անհատի համար, որը ցոյց կը տար այդ վաճառատան մէջ չը գտնված մի ապրանք։ Սկսվեց իրարանցում, բայց պրեմիան ոչ ոք չը ստացաւ, որովհետև մատնանիշ արած բոլոր ապրանքներն էլ կային վաճառատան մէջ։

Բացի դրանից «հսկայական վաճառատները» ունեն մի այլ առաւելութիւն, որից միանգամայն զուրկ են մանր վաճառականները։ Նրանք խոշոր կենտրոններում պահում են յատուկ գործակալներ, որոնք հետևում են վաճառականութեան ու առհասարակ տնտեսական կեանքի զարկերակին և յարմար րոպէում չափազանց էժան գնով գնում են ապրանքներ։

Գործի մեծութիւնը «հսկայական վաճառատներին» հնարաւորութիւն է տալիս աւելի խելացի կերպով բաժանելու աշխատանքը։ Այդտեղ իւրաքանչիւր գործակատար վաճառում է միայն մի որոշ ապրանք, ուստի և կարողանում է աւելի արագ, աւելի նպատակայարմար ձևով բաւարարութիւն տալ գնողների պահանջին։ Գնողին մնում է միայն ընտրել իր ցանկացած իրը բազմաթիւ տեսակների միջից և վճարել նշանակված գումարը։ Այդ վաճառատներն ունեն սեփական կառքեր ու ապրանքատարներ, որոնք ձրիաբար տուն են հասցնում գնած ապրանքները։ Կան այնպիսիները, որոնք բացի այդ բոլորից այս կամ այն ձևով պրեմիա են նշանակում որոշ գումարի ապրանք գնողներին։ Օրինակ, անցեալ տարի Շարլոտենբուրգի մի վաճառատուն 7 մարկից (մօտ 3 րուբլի) աւելի ապրանք գնողին իրաւունք էր տալիս ձրիաբար նկարվելու և 3—6 լուսանկար պատկեր ստանալու։

«Հսկայական վաճառատները» չափազանց ցանկալի են ամեն մի երկրի, ամեն մի ժողովրդի համար, որովհետև նրանք էժանացնում են ապրանքները, շատ ու շատ յարմարութիւններ են տալիս թէ սպառողներին և թէ արդիւնագործողներին։ Պարզ է, որ դրանք աւելի բարերար ազդեցութիւն կունենան, եթէ մի քանի անհատների սեփականութիւն չը դառնան, այլ բուն ժողովրդի—«սպառող ընկերութիւնների»։ Ուրեմն այստեղ էլ միութիւնն ու համերաշխութիւնը մեծ դեր կարող են խաղալ։

Եթէ բանաւորներն ու գիւղացիները, արհեստաւորներն ու պաշտօնեաները կազմակերպեն «սպառող ընկերութիւններ», այն ժամանակ այդ ընկերութիւններն էլ հնարաւորութիւն կունենան հաւաքական ոյժերով «Հսկայական վաճառատներ» հիմնելու մարդաշատ կենտրոններում, ինչպէս որ անում են օրինակ՝ Անգլիայում։

Ե. Թ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Դեկտեմբերի 5-ին

Դուսայում քննվում է քաղաքումս իգական գիմնազիա բանալու խնդիրը։

Սկզբնական ծախք որոշված է քառասուն հազար րուբլի, որից 30 հազարը խոստացել է տալ Բագուի նաւթարդիւնաբերող Դ. Իւզբաշեանը. ընակարանի համար ի նկատի ունեն տ. Հ. Ղուկասեանի հոյակապ շինութիւնը։

Մեր քաղաքը օրէց օր դատարկվում է, չնորհիւ նրան, որ չուշեցի օրիորդն էլ պահանջ է զգում շարունակելու իր ուսումը։ Այդ տեսակ օրիորդներին, ի հարկէ, ուրիշների ինամքին չէ կարելի յանձնել. ընտանիքները ստիպված են թողնելով տուն, տեղ և հայրենական օջախ, տեղափոխվել լուսաւորութեան կենտրոնները, կրկնակի և եռապատիկ ծախքեր աւելացնելով։ Ցանկալի է, որ օրիորդական գիմնազիայի հարցը շուտ իրագործվի մեզանում։

Գրադարան-ընթերցարանի համար դուսայում արդէն վարչութեան անդամներ են ընտրվել Գ. Տէր-Միքէլեան, Մ. Իւզբաշեան, Ք. Մէխմանդարով, Բ. Միրզայեանց, Ռ. Հախնազարով, Ա. Ջանուսով։ Գրադարանը դեռ 1898 թուականից չէ ստացել ոչ մի գիրք, իսկ ընթերցարանը չէ ստանում նոյն իսկ այնպիսի հրատարակութիւններ, ինչպէս «Кавказъ», «Баку», «Бак. Изв.», «Մուրճ», «Рус. Вѣд.», «Новое Время» և ուրիշ շատերը. անցեալ տարի անդամների թիւը 30-ից էլ պակաս էր, չը նայած որ անդամավճարը 3 րուբլի էր։

Մի պատկեր իրականութիւնից։

—Երկու րուբլի... Միայն երկու րուբլի կը խնդրեմ ձեզանից և արդէն ձեր անունը մատեանիս մէջ գրել եմ...

—Ինչո՞ւ համար. չէ՞ որ պէտք է բացատրէք...

—Խնդրում եմ դեռ մի հետաքրքրվեք և մի հարցնէք։

—Ուրեմն կարելի է և մի րուբլի։

—Ոչ, ոչ այդ անկարելի է, մի՞թէ ես ողորմութիւն եմ խնդրում, վրա է բերում խնդրողը, մեր քաղաքում իր գործերով ոչ անծանօթ Խորէն քահանան։

—Խնդրեմ ստացէք, առաջարկում է գիմացինը կարմրելով...

Մի քանի օրից յետոյ յիշեալ պարոնը սեղանի վրա գտնում է Պետերբուրգում տարիներ առաջ հրատարակված Գրիգոր Նիկողոսովի վայրահաչ «Армяне» գիրքը, որը պարոնը 50% պակասեցնելով ուղարկել է մի ազգու նամակի հետ, ուր տէր-հօր ազգասիրութիւնը մինչև եօթներորդ երկինք է բարձրացել, որպէս զի կարողանայ վաճառել իր հրատարակութիւնը մի այնպիսի յետ ընկած անկիւնում, ինչպիսին Շուշին է։ Բայց չէ՞ որ այս քաղաքում էլ կան այն ինտելիգենցիայից, որին նա ցեխի հետ է հաւասարեցրել։

Սակայն գիտէք ինչպէս վարվեցին այդ երկու րուբլի կորցնող պարոնները. նրանք կամ մկրատով կտրտեցին կամ կրակի ճարակ դարձրին...

Ապրելեան ազգանունով մի քահանայ է աշխարհ եկել և կամենում է տեղափոխվել Շուշի, իբր թէ հիւանդութեան պատճառով. Շուշում նրան ոչ ոք չէ ճանաչում, բացի Բենիկ վարդապետից և պ. Մելիք-Մուրադեանից։ Ջերմ կերպով այդ հարցը առաջ է տանում եկեղեցու երէցփոխը, որ նոյնպէս չէ ճանաչում նրան։

Մի հարց. եթէ Շուշու կլիման էլ նրան վնասէ, այն ժամանակ նա արդեօք չի՞ բանակցի Բագուի, Մոսկվայի կամ Պարիզի եկեղեցին անցնելու մասին։

Արցախեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Երևան, դեկտեմբերի 12-ին

Խնդրում եմ «Մշակի» մի անկիւնում թոյլ տալ զետեղելու այն գումարների հաշիւը, որոնք ստացել եմ ես վաղամեռիկ Լևոն վարդապետ Խօջայեանի արձանաքարի համար նրա թէ հոգևորական և թէ աշխարհական սրտակից ընկերներից։ Գերապատիւ Սահակ եպիսկոպոս Այվազեանից 10 ր., Արսէն վարդապետ Ղլտաճեանից 10 ր., Եսայի սարկաւագից 10 ր., հանգուցեալ Բագրատ վարդ. Թաւաքալեանից 5 ր., Մեսրովբ վարդ. Տէր-Մովսէսեանից 5 ր., Կորիւն վարդ. Սահակեանից 5 ր., Արամ վարդ. Արզումանեանից 5 ր., Մատթէոս վարդ. Մատթէոսեանից 5 ր., Աշոտ վարդ. Շախեանից 5 ր., Վահրամ վարդ. Սլկուսուց 5 ր., Սահակ վարդ. Ամատունուց 3 ր, Եղիշէ վարդ. Մուրադեանից 10 ր., Բարկէն վարդ. 2 ր., պ.պ. Արշակ Խօջայեանից 50 ր., Տիգրան Տէր-Ցակոբեանից 5 ր., Յովհաննէս Մելիքեանից 5

է Պարսկաստանի ամենամեծ հողատէրն ու հարուստը համարել. նա ունի 150 սեփական գիւղ, բոլոր քրդերը սրան են պատկանում, երկրի ընդհանուր դատաւորն է, այս բոլորի հետ միասին ունի և համապատասխան եկամուտներ։

Սարդարը բժշկի հետ վերադարձաւ. արդէն ժամը գիշերվայ 11-ն էր, որ մենք քաղցր քուն մաղթելով Մակուի պետին, մեկնեցինք մեր «դիւանխանայ» վրանը։ Բակի դրան մօտ մի մեծ քարի վրա նստած էր պահնորդ զինուորը, իսկ նրանից քիչ հեռու զանազան տեղերում սպասում էին իրանց պատրաստի ձիաներով զինված մի քանի քրդեր ու Թուրքեր. այսպիսի ձիաւորներ միշտ պատրաստի սպասում են Սարդարի հրամանին, որ կարիք եղած ժամանակ թռչեն այս ու այն կողմը։

—

Օգոստոսի 23-ին առաւօտն էր, մի ամպամած ու մառախլապատ առաւօտ. միշտը ծածկել էր շրջակայ լեռների գագաթները. Մասիսը չէր երևում։

Այդ առաւօտ ես պիտի մեկնէի Թադէոս Առաքեալի վանքը. սպասում էի խանին, որ ինձ «մուրախաս անէր»։ Շուտով յայտնվեց Սարդարի քարտուղարը և տուեց ինձ երկու նամակ, մէկը Թադէոս Առաքեալի վանահօր անունով էր, որի մէջ յանձնարարում էր դիւրութիւններ տալ ինձ վանքը ուսումնասիրելու, իսկ երկրորդը Աֆատաբադ գիւղի Շեր-խան սուլթանին էր, որով հրամայվում էր տալ ինձ իմ ուզած ձիաւորները, որոնք լեռնային կարճ ճանապարհներով պիտի Խոյ հասցնէին ինձ։ Սարդարը ցանկացել էր, որ ես առանց ճաշ անելու չը հեռանամ իրանցից, ճաշից յետոյ միմեանց «Խուդա հաֆիս» (Աստուած պահէ) ասէինք ու նոր ճանապարհ ընկնէի։ Ժամը մէկին Սարդարին «Խուդա հաֆիս» ասեցի ու ճանապարհ ընկայ։ Բժշկին սարդարը պահեց իր մօտ ինչ որ հիւանդների համար, իսկ իմ ընկերներս էին ձիապանը և երկու ձիաւորները, որոնք ինձ պիտի տանէին մինչև վանքը։

Թուրքերի արած հաշուով մենք 4—5 ժամից յետոյ պիտի վանքը հասնէինք, բայց օրը քանի գնում, աւելի վատանում էր, ամպերը աւելի խտանում ու մթնում էին. հեռուից որոտի ձայներ էին լսվում. երևում էր, որ ընութիւնը իր ամբողջ մաղձը պիտի միանգամից թափէր. ձիաները ծանր փոնչում էին։ Ձիապանը ինչ որ տեղ, հեռուում, լեռներ էր ցոյց տալիս, որոնց ստորոտում պիտի վանքը լինէր։ Մենք գնում էինք դէպի հարաւ արևելք. բոլորովին լեռնաշղթայի գագաթին էինք գտնվում, երբ սկսեցին ընկնել անձրևի խոշոր կաթիլներ։ Առաջներումս զանազան ուղղութեամբ ընկած էին ձորեր, որոնք հետզհետէ մթնում և դաժան տեսք էին ստանում, մառախուղը հետզհետէ աւելի թանձրանում էր և հրդեհի ծուխի նման լցնում այդ ձորերը. անձրևը սկսեց աւելի արագ գալ։ Հետզհետէ սաստկանում էր որոտն ու անձրևը, ընութիւնը ցոյց էր տալիս իր ամենասոսկալի երևոյթները, որոնց առաջ մարդը իր գոյութիւնը մոռանում է. անձրև, որոտ կայծակ և լեռների արձագանքը միախառնվել էին միմեանց ու մի սոսկալի տեսարան առաջացրել, կարծես երկինքն ու երկիրը պատերազմում էին միմեանց հետ ու այդ կռուի ծուխը սաստկանալով պատում էր շրջակայ լեռները։

Վերջին անգամ յետ նայեցի ամպամած Արարատին, նրանից ներքև արև էր և կապոյտին էին տալիս Արաքսի ձախ ափի լեռները. մի անգամ ևս նայեցի դիմացիս մառախլապատ անդունդին, ձիաւորս մտրակեց իր ձիուն և մենք սկսեցինք իջնել։ Մեր ճանապարհը սաստիկ վտանգաւոր էր. նախ որ մի փոքրիկ կածանով էինք իջնում, որը անձրևը փչացրել էր, և բաւական էր մի փոքր անզգուշութիւն, որ անդունդը գլորվէինք, երկրորդ՝ մենք գնում էինք մի տեղով, ուր չորս կողմը քրդերով էր ընակեցրած. ամեն մի րոպէ կարող էինք յարձակման ենթարկվել։ Ես նկատում էի, թէ ինչպէս ձիաւորներս անհանգստանում էին, հրացանները լցրին ու առաջները դրին։ Քանի գնում ճանապարհը վատանում էր, ստիպված հղանք ցած իջնել ձիերից և ոտով գնալ։ Մառախուղը հետզհետէ սկսեց նօսրանալ, բացվեց մի նեղ հովիտ, որի մէջ մէկը միւսից յետոյ սկսեցին նշմարվել քրդական սև վրանները, որոնք շարված են մինչև վանքը և վանքից էլ մինչև Կօրուլներ կոչված ձորը. այդ վրանների միջով պիտի անցնէինք։ Քրդերը հետաքրքրութեամբ հետևում էին մեզ մի քիչ, կանգնեցնում էին ձիաւորին, հարցնում և ապա յետ դառնում։ Չորը քանի գնում նեղանում էր ու փոքրանում. մտանք մի նեղ փոքրիկ կիրճ, որից դուրս գալիս իսկոյն աչքի ընկան վանքի գմբէթն ու սպիտակ պատերը. ձիերի ընթացքը արագացրինք և մի քանի րոպէից յետոյ վանքի գիւղի միջով մտանք վանքը։

Մի պատկեր իրականութիւնից։

—Երկու րուբլի... Միայն երկու րուբլի կը խնդրեմ ձեզանից և արդէն ձեր անունը մատեանիս մէջ գրել եմ...

—Ինչո՞ւ համար. չէ՞ որ պէտք է բացատրէք...

—Խնդրում եմ դեռ մի հետաքրքրվեք և մի հարցնէք։

—Ուրեմն կարելի է և մի րուբլի։

—Ոչ, ոչ այդ անկարելի է, մի՞թէ ես ողորմութիւն եմ խնդրում, վրա է բերում խնդրողը, մեր քաղաքում իր գործերով ոչ անծանօթ Խորէն քահանան։

—Խնդրեմ ստացէք, առաջարկում է գիմացինը կարմրելով...

Մի քանի օրից յետոյ յիշեալ պարոնը սեղանի վրա գտնում է Պետերբուրգում տարիներ առաջ հրատարակված Գրիգոր Նիկողոսովի վայրահաչ «Армяне» գիրքը, որը պարոնը 50% պակասեցնելով ուղարկել է մի ազգու նամակի հետ, ուր տէր-հօր ազգասիրութիւնը մինչև եօթներորդ երկինք է բարձրացել, որպէս զի կարողանայ վաճառել իր հրատարակութիւնը մի այնպիսի յետ ընկած անկիւնում, ինչպիսին Շուշին է։ Բայց չէ՞ որ այս քաղաքում էլ կան այն ինտելիգենցիայից, որին նա ցեխի հետ է հաւասարեցրել։

Սակայն գիտէք ինչպէս վարվեցին այդ երկու րուբլի կորցնող պարոնները. նրանք կամ մկրատով կտրտեցին կամ կրակի ճարակ դարձրին...

Ապրելեան ազգանունով մի քահանայ է աշխարհ եկել և կամենում է տեղափոխվել Շուշի, իբր թէ հիւանդութեան պատճառով. Շուշում նրան ոչ ոք չէ ճանաչում, բացի Բենիկ վարդապետից և պ. Մելիք-Մուրադեանից։ Ջերմ կերպով այդ հարցը առաջ է տանում եկեղեցու երէցփոխը, որ նոյնպէս չէ ճանաչում նրան։

Մի հարց. եթէ Շուշու կլիման էլ նրան վնասէ, այն ժամանակ նա արդեօք չի՞ բանակցի Բագուի, Մոսկվայի կամ Պարիզի եկեղեցին անցնելու մասին։

Արցախեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Երևան, դեկտեմբերի 12-ին

Խնդրում եմ «Մշակի» մի անկիւնում թոյլ տալ զետեղելու այն գումարների հաշիւը, որոնք ստացել եմ ես վաղամեռիկ Լևոն վարդապետ Խօջայեանի արձանաքարի համար նրա թէ հոգևորական և թէ աշխարհական սրտակից ընկերներից։ Գերապատիւ Սահակ եպիսկոպոս Այվազեանից 10 ր., Արսէն վարդապետ Ղլտաճեանից 10 ր., Եսայի սարկաւագից 10 ր., հանգուցեալ Բագրատ վարդ. Թաւաքալեանից 5 ր., Մեսրովբ վարդ. Տէր-Մովսէսեանից 5 ր., Կորիւն վարդ. Սահակեանից 5 ր., Արամ վարդ. Արզումանեանից 5 ր., Մատթէոս վարդ. Մատթէոսեանից 5 ր., Աշոտ վարդ. Շախեանից 5 ր., Վահրամ վարդ. Սլկուսուց 5 ր., Սահակ վարդ. Ամատունուց 3 ր, Եղիշէ վարդ. Մուրադեանից 10 ր., Բարկէն վարդ. 2 ր., պ.պ. Արշակ Խօջայեանից 50 ր., Տիգրան Տէր-Ցակոբեանից 5 ր., Յովհաննէս Մելիքեանից 5

Երեկոյեան ժամերգութիւնը վերջացել էր, վանքի բակում լցվել էին մի խումբ գաղթականներ, որոնք Ռուսաստանից էին եկել և գնում էին իրանց հայրենիքը. յետոյ իմացայ որ այսպիսի գաղթական խմբեր յաճախ են գալիս և վանքի վրա բաւական թանգ նստում։ Այդ թշուառների միակ պաշտպանն ու ապաստարանը այս կողմերում վանքն է, ուր կարող են մի երկու օրով հանգստանալ և իրանց ճանապարհը շարունակել։ Խմբի մէջ կանգնած էր 16—17 տարեկան մի տղայ, դպրոցական համազգեստով, որը ալաչկերտցիների բարբառով ինչ որ բարձր խօսում էր, երբեմն էլ հետը ռուսերէն բառեր խառնելով. դա էլ գաղթականներից էր երևում։

Ինձ առաջնորդեցին վանահօր մօտ. մտայ մի մութ սենեակ երկու փոքրիկ լուսամուտներով, որոնցից հազիւ էր լոյսը ներս թափանցում. չը գիտեմ ինչու այդ խուցը ինձ վրա մի սաստիկ ճնշող տպաւորութիւն թողեց։ Ես դեռ չէի պատահել հոգևորականի այս աստիճանի աղքատ մի բնակարանի։ Խցի մի անկիւնում դրված էր վանահայր Գէորգ վարդապետ Նալբանդեանի փայտէ մահճակալը, որի առաջ մի կտոր հին գորգի վրա ծալապատիկ նստած էր նա։ Վանահօր սեղանը մի ինչ որ արկղ էր, որի վրա նա կռացած գրում էր։ Համեմատում էի էջմիածնի միաբանների բնակարանների և կահկարասիների հետ. ուրպիսի հակայական տարբերութիւն. այս խեղճ երիտասարդ վանականն ու իր ծառայողները մի մի կենդանի նահատակներ են Մակուի լեռներում։

(Կը շարունակվի)

ր., Գաբրիէլ Մնացականեանից 5 ր., Գրիգոր Տէր-Խաչատրեանից 5 ր., Յովհաննէս Սաղաթելեանից 5 ր., Գէորգ Ահարոնեանից 5 ր., բժիշկ Յովհաննէս Յովհաննէսեանից 3 ր., Ներսէս Ներսէսեանից 2 ր., Տիգրան Աւագեանից 1 ր., ընդամենը 166 ռուբլի։ Այս գումարը, 166 ռուբլի, նոյնպէս յանձնեցի պ.պ. Լիսիցեանցին և Լեոն Սարգսեանցին։

Գ. Ահարոնեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վեհափառ Կաթուղիկոսը այսօր, ուրբաթ, դեկտեմբերի 13-ին, ցերեկվայ ժամի 12-ին և 28 բոպէին, երկաթուղու գնացքով կը մեկնէ Ալէքսանդրոպոլի վրայով դէպի Էջմիածին։

—

Ասիաբադի լրագիրներում տպագրված է գեներալ Արենդարենկոյի հետևեալ հեռագիրը Անդիժանից. «Քաղաքի ինչպէս ռուսական, այնպէս էլ տեղացիների թաղերը բոլորովին աւերված են։ Անվնաս չէ մնացել ոչ մի շինութիւն։ Աւերակների տակ թաղված են երեք ռուս ծառայողներ և երկու զինուոր։ Վիրաւորված զինուորների թիւը 17-ն է, որոնցից 6-ը ծանր։ Տեղացիներից մնացել են փլուածքների տակ և մեռել են 150 հոգի, գլխաւորապէս երեխաներ, իսկ վիրաւորվել են մօտ 300 հոգի։ Ռուսները ապաստան են գտել վագոններում, իսկ տեղացիները—աւերակներում։ Ինչպէս ռուս, այնպէս էլ տեղական ազգաբնակութիւնը հանգիստ և համբերութեամբ տանում է աղէտը։ Երկրաշարժը շարունակվում է։ Օշ, Նամագան և ռուսական միւս գիւղերը չեն վնասվել։ Նշանաւոր վնասներ են կրել Ասսակէ և Չորս ղշլաղներ։ Կորուստները ընդհանրապէս մեծ են. միջոցներ են ձեռնարկված կորուստի չափը որոշելու համար։ Բացի կառավարչական հիմնարկութիւններից՝ ռուսական քաղաքում կործանվել են 130 տներ, տեղացիների մասում—9000 տներ։ Անկարգութիւններ չեն եղել։

—

Դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած խորհրդակցութիւնների ժամանակ, Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւորները քաղաքագլխի թեկնածու ընտրեցին իշխան Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկին եւ Ֆ. Վերմիշեվին։

—

Համաձայն այն պայմանագրի, որ Թիֆլիսի ձիաքարշի ընկերութեան նախկին դիրեկտոր Բօբի կապել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան հետ ֆունիկուլեօրի շինութեան մասին, այդ շինութեան ժամանակամիջոցը լրացել է արդէն, իսկ 1903 թուականի մարտի 7-ին լրանում է նաև արտօնեալ ժամանակամիջոցը, որից յետոյ Բօբիի պայմանագիրը քաղաքի հետ պէտք է համարել չը կայացած։ Այն անձինք, որոնք ամարանոցային հողաբաժիններ են գնել ս. Դաւթի սարի վրա, արդէն կորել են իրանց յոյսը այն բանից, որ Բօբի կը կատարէ իր խոստումը—կը շինէ ֆանիկուլեօր, կը տնկէ պարաէդ, կը հիմնէ թատրոն և այլն։ Այդպիսի անձանց թիւը 117-ն է, որոնք վճարել են Բօբիին 131,836 ր. 50 կոպ. գնած հողաբաժինների համար, այն ինչ ինքը՝ Բօբի գնել է ամբողջ հողը նախկին կալուածատէրերից 41,664 ռուբլով և այն էլ ոչ միանուագ վճարելու պայմանով։ Բօբիին հողի քառակուսի սաժէնը նստել է ընդամենը 8 կոպէկ, մինչ դեռ նա ծախել է նոյն չափ հողը 50 կ.—1 ր. 50 կոպէկ։ Պարզ է, որ յիշված 117 հոգին զոհ են դարձել ճարպիկ բելգիացու խաբէութեան։

—

Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Զավադսկի, կամենալով բարձրել ուսուցման գործը Կովկասի արհեստաւորաց և տեխնիկական ուսումնարաններում, մտադիր է հրաւիրել Թիֆլիս այս ուսումնարանական տարվայ վերջում յիշված ուսումնարանների կառավարիչներին։ Հաղորդելով այս մասին արհեստաւորաց և տեխնիկական ուսումնարանների գլխաւորներին՝ հոգաբարձու Զավադսկի խնդրում է նրանց մանկավարժական ժողովներում քննել այն հարցերը, որ օգտակար կը լիներ բարձրացնել կառավարիչների համաժողովում։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ առաջիկայ կիրակի, դեկտեմբերի 15-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում կը կայանայ Ա. Պօլիվկինի կոնցերտը՝ մասնակցութեամբ Մէլիքովայի, Բարթօվի, Վիլշուի, Գարտինի, Կէսնէրի, Կրասովի, Նիկոլաեվի եւ Տօմաշեվիչի։

—

ՀԱՑ ԹԱՂԻՆ գիւղից (Էջմիածնի գաւառ) մեզ գրում են. «Մշակի» ընթերցողներին յայտնի կը լինի, որ մեր գիւղում կայ երկդասեան դպրոց, որ հիմնված է 1896 թուին և մինչև 1900 թիւը միդասեան էր։ Ուշադրութիւն դարձնելով այն հանգամանքի վրա, որ ներկայ ուսումնարանը կարող է զետեղել ոչ աւելի, քան 1000 աշակերտ, իսկ ուսում ստանալու ցանկութիւն ունեցողների թիւը տարէ տարի չատանում է, ուստի բոլոր ցանկացողներին բաւականութիւն տալու համար, մեր մէջ միտք յղացաւ դպրոցում բաց անել զուգընթաց դասարան։ Եւ ահա անցած նոյեմբերի 20-ին Թալինում կայացաւ հասարակական ժողով գիւղական տանուտէրի ներկայութեամբ, որտեղ մեր ուսուցիչները բացատրելով ժողովրդին վերոյիշեալ միտքը, առաջարկեցին նրանց բաց անել յիշված դասարանը, աւելացնելով և այն, որ այդ նպատակի համար գանձարանը արձակում է նպաստ տարեկան 400 ռուբլի, իսկ նոր բացվելիք դասարանը պահելու համար հասարակութիւնը պէտք է աւելացնէ տարեկան միայն 180 ր. այն 920 ր. վրա, որ նա տալիս է ամեն տարի ուսումնարանի գոյութիւնը պահպանելու։ Ուրեմն հասարակութիւնը տարեկան պէտք է վճարէ դպրոցի համար ընդամենը 1100 ռուբլի, գանձարանից նպաստ ստացվելու է 400 ր. բացի դրանից, դպրոցին նուիրած 10,000 ռուբլուց տարեկան ստացվում է տոկոս 378 ր., ընդհանուր գումարն է 1878 ր., որով պէտք է կառավարվի երկդասեան ուսումնարանը զուգընթաց դասարանով։ Հասարակութիւնը ուրախութեամբ ընդունեց այս առաջարկութիւնը և անմիջապէս կազմեց վճիռ վերոյիշեալ դասարանը բաց անելու և երրորդ ուսուցիչ հրաւիրելու համար։ Վճռի մէջ նշանակվեց և այն, որ հասարակութիւնը պէտք է դիմէ խնդրով երեւանեան նահանգի ժողովրդական դպրոցների պ. տեսչին միջնորդելու, որպէս զի գանձարանը արձակէ 1000 ռուբլի զուգընթաց դասարանի և երրորդ ուսուցչի համար սենեակներ կառուցանելու։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵՕՐՆՍՏԻՐՆԷ-ԲԵՕՐՆՍՕՆ

—

Այս դեկտեմբերի 8-ին լրացաւ Նորվեգիայի հռչակաւոր բանաստեղծ Բեօրնսօնի ծննդեան եօթանասունամեակը և ամբողջ Նորվեգիան տօնեց այդ օրը իբրև ազգային մի մեծ տօնախմբութիւն։

Բեօրնսօնի գործը, մանաւանդ նրա վերջին դրամաները յայտնի են ամենքին, մանաւանդ Եւրոպայում, բայց նրա կատարած սոցիալական և քաղաքական դերը իր հայրենիքում այնքան էլ չատ ծանօթ չէ, ուստի և անօգուտ չենք համարում կրկնել այստեղ Բեօրնսօնի այդ գործունէութեան յաջորդական փաղիները, քաղելով «L'Europeen» հանդէսից։

Երբ Բեօրնսօնը գրական ասպարէզ դուրս եկաւ, Նորվեգիայում բօսմանիկ գրականութիւնը իր ծաղկեալ շրջանի մէջ էր։ Վերգելանդ մեծ բանաստեղծը, որ Բեօրնսօնի կարապետն է, արդէն մեռել էր 10 տարուց ի վեր, բայց նրա բարձր իդէալական բանաստեղծութիւնը օրէցօր աւելի էր հասկացվում և գնահատվում։ Այդ ժամանակ կարևոր գիւտեր էին արված ֆօլկլօրի շրջանում, հրատարակվել էին ժողովրդական հէքիաթներ, ժողովրդական հին երգեր, որ բանասէրները ժողովել էին բարեպաշտութեամբ գիւղացիների մօտ։ Մի քանի պատմաբաններ մի նոր լոյս էին սփռել սագաների հերոսական շրջանի վրա, սկսել էին հետաքրքրվել նորվեգիական հին ճարտարապետութեամբ, մոռացութիւնից հանել էին միջին դարերի հին եկեղեցիները, վիշապների և այլ ֆանտաստիական կենդանիների քանդակագործութեամբ։ Նկարիչները սկսել էին որոնել երկրի բնութեան և գիւղացիների կեանքի մէջ սիւժէտներ իրանց վրձինի համար։ Երաժշտագէտները ներշնչվում էին իրանց շարադրութիւնների մէջ ժողովրդական հին երաժշտութեամբ։ Մի խօսքով, նորվեգիական ժողովուրդը, ոչի իմացականութիւնը երկար ժամանակ քնած էր, արթնացել էր և իր սեփական գիտակցութիւնը ըմբռնել։ Լինելով ազատ քաղաքականապէս, նա կամենում էր նուաճել և անկախութիւն գեղարուեստի, գրականութեան և իր ամբողջ մտաւոր կեանքի մէջ։

Եւ Բեօրնսօնը, որ դեռ բոլորովին երիտասարդ հասակում, թողել էր իր հօր գիւղական տունը և եկել Քրիստիանիա, նետեց իրան ոգևորութեամբ ազգային այդ նոր մտաւոր շարժման յորձանքի մէջ։ Եւ նա շուտով դարձաւ և այժմ ևս է այդ շարժման պարագլուխը։ Մի քանի տարի ուսումն առնելով, երբ նրա ընկերներն էին բանաստեղծ Վինիէն, Հենրիխ Իբսէնը, Եօնաս Լին, նա սկսեց գրել։ Նրա առաջին գործն եղաւ մի փոքրիկ պատմական դրամա՝ «Պատերազմների մէջ», որ լոյս տեսաւ 1857-ին և որին հետևեցին ամբողջ տասն և հինգ տարվայ ընթացքում չինական հէքիաթների մի ամբողջ շարք և մի քանի պօէմաներ։ Գուցէ նա երբէք ուրիշ այնքան կատարեալ բան չէ գրել, այնքան շատ բանաստեղծական և քնքոյշ, իբրև զգացմունք, քան երիտասարդական այդ գործերը. նրա արձակ շարադրութիւնների լեզուն խորապէս ներշնչված է հին սագաների ամենամռայլ ազդեցութեամբ և այդ կողմից խիստ հակապատկեր է ներկայացնում դանիական բօսմանտիզմի չափազանց ոճի հետ։ Այդ պատճառով երիտասարդ բանաստեղծը մեծ ընդդիմադրութեան և դժգոհութեան հանդիպեց դանիամոլների կողմից։ Բայց նոյն իսկ դանիամոլները չը կարողացան վերջիվերջոյ չը հիանալ Բեօրնսօնի այն թարմ նորութեամբ, որով նա նկարագրում էր գիւղացիների կեանքը և այն վարպետ վրձինը, որով նա կարողացաւ վերակենդանացնել միջնադարեան Նորվեգիան։

Նրա պօէմաները և երգերը չատ շուտով ժողովրդական դարձան, և այսօր Նորվեգիայում մի հատ երեխայ չը կայ, որ սերտած չը լինի նրա օրհներգը հայրենիքին—Ga, vi elsker delle landel.. «Այո, մենք սիրում ենք այս երկիրը...»—ազգային օրհներգի մի ճշմարիտ պատկեր։ Այդ շրջանին պատկանում են նրա շինական հէքիաթները—Սիննօվ, Զօլբաքէն, Արն, դրամաները—Հիլդա կաղուհին, Սիգուրդ Սլեմբ, Նոր Ամուսնացածներ և այլն։

Յաջորդ անգամ մենք կը խօսենք նրա հրապարակախօսական գործունէութեան մասին։

Հ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Սուլթանի փեսայ Մահմուդ-Դամադ փաշան, ի հերքումն այն լուրերի, թէ իրան թոյլատրված է վերադառնալ Կ. Պոլիս, տպել է «Figaro» լրագրի մէջ հետևեալ նամակը. «Օսմանեան դեսպանութիւնը Պարիզում տպել է «Ֆիգարօի» դեկտեմբերի 11-ի համարում մի հաղորդագրութիւն, որ ստիպված եմ վճռողապէս հերքել։ Այդ հաղորդագրութեան մէջ ասված է, որ իբր ինձ «թոյլատրված» է (sic!) վերադառնալ Կ. Պոլիս, բայց ես չը կարողացայ օգուտ քաղել այդ թոյլտուութիւնից (sic), հիւանդութեան պատճառով։ Ես պէտք է յայտնեմ, որ երբէք չեմ խնդրել այդպիսի թոյլտուութիւն. բանի էութիւնը այս է։ Թիւրքաց դեսպան Մունիր բէյը և սուլթանի ուրիշ ներկայացուցիչները այս երեք տարվայ ընթացքում գալիս էին ինձ մօտ և համոզում էին ինձ և որդիներիս վերադառնալ Թիւրքիա։ Վերջերս Մունիր բէյը դարձեալ համոզում էր ինձ սուլթանի անունից վերադառնալ հայրենիք։ Սուլթանը, որ դատապարտել է ինձ մահվան, չէ վստահացել անձնապէս դիմել ինձ։ Նրա կողմից ուղարկված գործակալները խօսում էին ինձ հետ նրա քրոջ, իշխանուհի Սենահի կողմից, որ իմ կինն է։ Ի նկատի ունենալով այն յարգանքը, որ ես տածում եմ դէպի նրան, ես համաձայնեցի խորհրդակցութիւն կազմել բժիշկներից ուղևորութեանս հնարաւորութեան մասին, որովհետև ես բոլորովին համոզված էի բժիշկների բացասական պատասխանի մասին։ Խորհրդակցութիւնից յետոյ թիւրքաց դեսպանութիւնը բոլորովին ապարդիւն ջանքեր արեց համոզել ինձ վերադառնալ Կ. Պոլիս, առաջարկելով ինձ յատուկ գնացք և այլ յարմարութիւններ։ Զը նայելով իմ ֆիզիկական տկարութիւններին, չը նայելով իմ բարոյական տանջանքներին, ես մի անգամ ևս վճռողապէս յայտնում եմ. ես դերադասում եմ մեռնել աքսորում, հեռու իմ ընտանիքից և հայրենիքից, կատարված պարտավանութեան գիտակցութեամբ, քան վերադառնալ Թիւրքիա բէֆորմների իրագործմանից առաջ, այն բէֆորմների, որ բոլոր թիւրքերը սպասում են և եւրոպական պետութիւնները անհրաժեշտ են համարում»։

—Ինչպէս յայտնի է, Հայաստանում գումարված միջկառավարչական կոնֆերէնցիան, եթէ չը կարողացաւ իրագործել ռուսաց Կայսրի առաջարկութիւնը զինաթափութեան մասին, բայց սկզբունքով ընդունեց կազմակերպել միջազգային միջնորդ դատարան, միջազգային վէճերը լուծելու համար։ Սակայն այդ դատարանը, որ այս տարի արդէն սկսել է պաշտօնավարել և որի աթոռանիստ տեղը Հաագան է, պարտադիր չէ, այսինքն նա կարող է քննել և վճռել միջազգային վէճերը, երբ վէճ ունեցող պետութիւնները կամ ազգերը դիմեն նրա իրաւասութեան։ Այդ պատճառով խաղաղասէրները ամեն ջանք գործ են դնում, որ պետութիւնները կամ երկիրները իրար հետ որ և է դաշնագրեր կնքելիս, պարտաւորվեն իրանց փոխադարձ վէճերը լուծելու համար դիմել ոչ թէ պատերազմի, ստիպողական կամ յարձակողական միջոցների, այլ միջնորդ դատարանին։ Եւ ահա խաղաղաբերական օրգանները մեծ ուրախութեամբ յայտնում են, որ կենտրօնական Ամերիկայի երեք երկիրներ, այն է Կոստա-Ռիկայի հանրապետութիւնները—Հոնդուրաս, Սալվադոր և Նիկարագուա կնքել են պարտադիր միջնորդ դատարանի դաշնագիր, որով պարտաւորվել են այսուհետև իրանց բոլոր վէճերը ենթարկել միջնորդ դատարանի քննութեան և այդ դատարանի վճիռը իբրև պարտադիր ընդունել։ Թէև այդ երեք հանրապետութիւնները աննշան երկիրներ են, բայց մեծ գաղափարները միշտ տարածվում, զարգանում են փոքրերի և խեղճերի մէջ. սերմը ձգված է և հետզհետէ կարող է աճել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

11 դեկտեմբերի

ՄԱԴՐԻԴ։ Համաձայն ստացված տեղեկութիւնների, սուլթանի զօրքերը մտել են Տաչու։

ՇԱՆԳՀԱՑ։ «Times» հաղորդում է, թէ միսիոնէրները իմացել են, որ Տունֆուսեան ժողովում է մարդկանց խմբեր։

ԿԻԻՐԱՍԱՕ։ Դեկտեմբերի 12-ին լրանում է զինադադարի ժամանակամիջոցը կառավարութեան և ապստամբների մէջ։ Ապստամբների երեք բանակներ գտնում են Կարակասի վրա։ Դրութիւնը կրիտիկական է։ Կաստրօ մեկնում է կանգնեցնելու ապստամբներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Դեկտեմբերի 12-ին, ժամի 12-ին և 35 բոպէին, Լիվադիայից վերադարձան Ցարսկօե-Սելօ Նոցա Կայսերական Մեծութիւնները։ Նոցա Կայսերական Մեծութիւններին դիմաւորեցին Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ, Բորիս Վլադիմիրովիչ և Գէորգի Միխայլովիչ։ Նոցա Մեծութիւնները մեկնեցին դէպի Ցարսկօե-Սելօյի Ալէքսանդրեան պալատը։

12 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը, համաձայն զեկուցման ներքին գործերի մինիստրի, բարեհաճեց թոյլ տալ պետութեան մէջ ընդհանուր ժողովարարութիւն անել Շամախու մայր-եկեղեցին վերականգնելու համար։—«Правит. Вѣстникъ»-ում տպագրված է Բարձրագոյն հրովարտակ Իւրեւի համալսարանին՝ նրա հիմնարկութեան հարիւրամեայ յօբելեանի առիթով։

Կ. ՊՕԼԻՍ։ Լուրերին նայելով, Իլդիզ-Կիոսկից ուղարկված է կօնֆիդէնցիալ հեռագիր. նրա նպատակն է հանգստացնել ազգաբնակութեան մտքերը, որոնք գրգռված են մակեդօնական կօմիտէտի գործունէութեան և այլ հանգամանքների չնորհիւ, հեռացել դժգոհութիւնների և գանգատների առիթները ազգաբնակութեան կողմից և ամեն կերպ խուսափել քաղաքացիական և զինուորական իշխանութիւնների կամայականութիւնից և արիւնահեղ ընդհարումներից ազգաբնակութեան հետ։ Այդ կարգադրութիւնը արված է ռուսական հաղորդակցութեան ազդեցութեան տակ կոմս Լամզդորֆի ուղևորութեան մասին. նոյն պատճառներին անհրաժեշտ է վերագրել զանազան ընդարձակ զինուորական նախապատրաստութիւններ, որոնց իրագործումը, իբր թէ, կը սկսվի կարճ ժամանակից յետոյ։

ՎԻԵՆՆԱ։ «Neue Freie Presse» լրագրի ասելով, Ֆրանց-Յովսէփ կայսրը համաձայնվեց էրցհերցոգ Լէօպոլդ-Ֆերդինանդի հրաժարականը կայսերական տան անդամի իրաւունքից այն պայմանով, որ նա չանցնի պետութեան սահմաններից։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Երբ մինիստրական խորհուրդը քննում էր այն հարցը, թէ պէտք է արդեօք Ռուզվէլտ միջնորդութիւն յանձն առնէ, մի քանի անդամներ չէին կամենում դիմել Հաագայի միջնորդ դատարանին, համաձայն Մոնրօէյի վարդապետութեան։ Բացի դրանից, վէճը լուծելու համար Հաագայի միջնորդ դատարանը շատ աւելի ժամանակ պէտք է գործադրէ քան Ռուզվէլտ։

ՄՕՍԿՎԱ։ Նահանգական դատարանը վերջացրեց այն գործը, որով Միխայլով վաճառականները մեղադրվում են 200,000 ռուբլու կեղծ մուրհակներ կազմելու մէջ։ Երդուեալ դատաւորներին առաջարկվեցին աւելի քան մէկ ու կէս հազար հարցեր։ Մեղադրվածները արդարացրած են։

ԿԱՐԱԿԱՍ։ Դեկտեմբերի 17-ից յետոյ այլ ևս ոչ մի շոգենաւի չի թոյլ տրվի մտնել վէնէցուէլական ջրերը։ Պաշարողնաւերը պատրաստ են ափ հասցնել իրանց նաւակներով պօստը և այն ճանապարհորդներին, որոնք կը գնան չէզոք պետութիւններից։

ՎԻԵՆՆԱ։ Կրօն-պրինցէսսա մտադիր է ընդմիշտ բնակվել Մէնտօնում. նրա վերադարձի մասին չէ կարող խօսք լինել։ Շատ կարելի է, որ կը դիմեն Պապին տմուսնութիւնը լուծելու համար։

ԲԻԼԳՐԱԴ։ Կոմս Լամզդորֆի այսօրվայ գալստեան առիթով՝ սերբական բոլոր լրագիրնե-

...ում, առանց կուսակցութիւնների խառնութեան, տպագրված են ջերմ ողջոյնի յօդուածներ։ Ռուսաց միսսիային ուղարկված են ողջոյնի բազմաթիւ հեռագիրներ։ Ամեն տեղ պատրաստվում են ոգեորված ցոյցեր անելու կոմիտէին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Դեկտեմբերի 15-ին, կիրակի, ժամի 12-ին, ս. պատարագից յետոյ՝ Զրկինեան ս. Կարապետ եկեղեցում վինելու է ծխականների վերջին ժողով նոր երէցփոխ ընտրելու։ Ուստի՝ խնդրում եմ վերոյիշեալ եկեղեցու ծխականներին՝ չնորհք բերել յիշեալ եկեղեցին որոշած օրը և ժամին—ժողովի զբաղմունքներին մասնակցելու։

Թիֆլիսի հայոց եկեղեցիների գործակալ՝
Գրիգորիս քահ. Երզնկեանց
1—2

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ
ԴՈԿՏՈՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
մասնաւորապէս
ԲԳԻ, ՔԹԻ, ԱԿԱՆՋԻ ԵՒ ԿԸԾԲԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Сергіевская ул., д. 12.

Լոյս տեսան և վաճառվում են
1903 Մ. ՀՄՇԿԵԱՆԻ Թ. ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
Հասցէն. Թիֆլիս, Մակար Զէյնկեան
5—10

ԲԺՇԿԱԳԵՏ
ԳՐ. ԻՎ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ
նէրքին և երեխաների հիւանդութիւններու Ընդունում է առաւօտեան 10-ից մինչև 11-ը և 5-ից մինչև 7 ժամ երեկոյեան։ Միխայլովսկի պրոսպէկտ 154։ Տելէֆոն 825։ 4—30

ՀՐԱՒԷՐ

Ներկայ դեկտեմբերի 8-ին նշանակած ծխաժողովը չը կայացաւ—ծխականների օրինական թիւը չը վինելու պատճառով. ուստի պատիւ ունեմ խնդրել Տափի թաղի ս. Գէորգ եկեղեցու յարգոյ ծխականներին, կիրակի, ներկայ դեկտեմբեր ամսի 15-ին, առաւօտեան 11 ժամին չնորհ բերել վիճակային կոնսիստորիայի տունի դահլիճը՝ ծխական ընդհանուր երկրորդ ժողովի. նախ հրաժարականս և հաչիս ընդունելու և նոր երէցփոխի ընտրութեան ձեռնարկելու, և երկրորդ՝ կոնսիստորիայի մի դրամական պահանջին գոհութիւն տալու։ Այս ժողովը օրինական կը համարվի՝ ինչ թիւ ծխականներից որ վինի։

Երէցփոխ նոյն եկեղեցու՝
2—3 Առ. Վարդապետեանց

Մի խաւուրք Թիֆլիսէն մեկնելու պատճառով ծախվում է, կամ տրվում է արենդով, բաղկացած է 3 մասերից՝ կոնդիտէրսկի, կոլոնիալնի և գրեանց վերաբերեալ առևտրով։ Դիմել Ելիզավետեան փողոց, № 68։ 3—3

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ
ԽԵՂՃԵՐԸ
ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
Գինն է 1 բուբլի
Ճանապարհածախսով 1 ր. 20 կոպէկ։
Դիմել հեղինակին. Тифлисъ, редакція „Мурчъ“ եւ Գուտենբէրգ գրավաճառանոցը։
5—10

Որոնում եմ կապալառու
Նոր չինված նօմերների համար։ Մանրամասնութիւնները հարցնել Վ-ոյնինից։ Պոկի, № 13, Բազիերովի նոր դեղատան դիմաց։
2—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ա. Մ. Խան-Աղեան
Ընդունում է հիւանդներին 9—2 եւ 4—6 ժ. Երեւանեան հրապարակ, տուն Խորաքեանի № 8։ (կ. ե. Հ.) 21—100

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆՈՒՄ
Հայոց դրամատիկական ընկերութեան խումբը
Երկուշաբթի, դեկտեմբերի 16-ին
մասնակցութեամբ Տ. Սպէնդիարեանի
Ի ՆՊԱՍՏ Պ. ԱԲԵԼԵԱՆԻ
կը ներկայացնէ առաջին անգամ
ՍՈԴՈՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ
Դրամա 5 գործ., հեղ. Զուլէրմանի,
Թարգմ. Ս. Թառայեանի
Մասնակցում է ամբողջ խումբը
Սկիզբն է 8 ժամին
Տեղերի գները բէնէֆիսի են
Տոմսակները վաճառվում են միհիայն թատրոնի կասայում
Բեժիսեօր՝ Ե. Աբելեան
2—2

ՀՐԱՒԷՐ

Դեկտեմբերի 15-ին, կիրակի, ս. պատարագից յետոյ, ժամի 11-ին, լինելու է Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ծխականների ժողով ՆՈՐ ԵՐԷՑՓՈԽ ընտրելու համար։ Ուստի՝ խնդրում եմ վերոյիշեալ եկեղեցու ծխականներին որոշած օրը եւ ժամին չնորհ բերել նոյն եկեղեցին՝ նշանակած զբաղմունքներին մասնակցելու համար։

Թիֆլիսի հայոց եկեղեցիների գործակալ՝
1—2 Գրիգորիս քահ. Երզնկեանց

Վրաստանի եւ Իմերէթի հայոց վիճակային կոնսիստորիայի տեսանում դեկտեմբերի 18-ին ՆՇԱՆԱԿՎԱԾ է ԱՃՈՒՐԴ վարձով տալու Կուկիայի ս. Աստուածածին եկեղեցու գաւթում գտնված երկու եկեղեցական կրպակները։ Ցանկացողները պէտք է ներկայացնեն պատշաճ գրաւական։

Անդամ կոնսիստորիայի՝
1—3 Զաքարիա քահ. Զարդեղեանց

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՄԵՂՐ
Ա. ՄԻԽԻԹԱՐԵԱՆԻ ՄԵՂՈՒԱՆՈՑԻՑ։
Ֆունտը—40 կոպ. պուդը—14 բուբլի
Կանոնիրսկի պերեուլոկ, տուն Զիալովի, № 2 (Բազդոնի պոստի եռեւում)։
Առ. ժ. 10—1. երեկ, ժ. 5—7։

XX-ՐՈՐԴ ԴԱՐԻ ՀՐԱՇԱԼԻՔ
Ամենաճոխ եւ միակ ֆէէրիէն առանց ձեռքերի՝ Սէնիոր Բարաոնի, ծնվել է առանց երկու ձեռքերի 1880 թիւին Պալերմօ քաղաքում (Իտալիա), վերջացրել է գեղարուեստի ակադեմիան ոտքերով եւ նկարում է իւրաքանչիւր այցելուի պատկերը, հատուկ ուրութեան աչքի առաջ, 10 րոպէի ընթացքում։ Սէանսները տեղի են ունենում իւրաքանչիւր կէս ժամը մի անգամ փոքրագոյն քաց նամակների ցուցահանդէսում՝ որ կազմել է Ֆրանսիական a la ville de Paris ֆիրմայի պահեստը, Գոլովինսկի պրոսպէկտի վրա, արքունի թատրոնի դիմացը։ Մուտքը—25 կոպ. երեխաները վճարում են 15 կոպ.։ Հասակաւորները սատանում են 6, իսկ երեխաները—3 քաց նամակ, որպէս պրէմիա։
4—4

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ (Դեկտեմբերի 15-ի փոխարէն)
կայանալու է
Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան
ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ
թանկագին սիւրպրիզներով (ընծաներով)
Տոմսակի գինն է 2 ր. 20 կոպ. Սկիզբն է ժամը 9½-ին երեկոյեան։ Տոմսակները կարելի է առանալ ընկերութեան կար ու ձեւի արհեստանոցում։
Ծանօթութիւն։ Ներկայացնելով տոմսակը, տացվում է իրաւունք սիւրպրիզի տոմսակի։
2—2

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ
ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ
Գ. ՓԱՍՏՐՄԱՋԵԱՆԻ
ԴՈԿՏՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Քիմիական անալիզներ (որակական եւ քանակական) ամեն տեսակ նիւթերի՝ հանքեր, հանքային ջրեր, գիւղատնտեսական նիւթեր եւ այլն եւ այլն։
Տեխնիկական փորձեր եւ խորհուրդներ։
Դիմել՝ Тифлисъ, Кавказская Центральная Лабораторія Доктору химіи Г. Пастермаджіянъ, Вельяминовская ул., д. Лорисъ-Меликова, № 19. 11—24

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԿՕՆՖԷՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները արժանացան—
Կովկասում կոնֆէտի արդիւնաբերութեան
ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ
Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՈԿՈՒՄ։, կարամէլ ՀԻԲԻԼԻՑՆԱՑԱ եւ տարբեր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։
Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։
Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Գամլօվսկայա փողոց, սեփական տուն
Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութինը № 772։
88—100

Մոսկվա 1865 թ. Մոսկվա 1882 թ.
Սանկտ-Պետերբուրգ 1870 թ. ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Նիժնի-Նովգորոդ 1896 թ.
ԵՒ ՐԷՏԻՆԻ ՈՒՐԻՇ ԻՐԵՂԷՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵԻ (GRAND-PRIX)
Պարիզի ցուցահանդէսում տրված է Ռուսաստանից ՄԻՄԻԱՑՆ
ՐԷՏԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
որ հիմնված է 1860 թուականին
Խորհում ենք էտինի կրկնակոշիկներ գնելիս ուշադրութիւն դարձնել կրունկներ հեռեւեալ նշանի վրա



Մանաւանդ ընկերութեան գործարանի «1860» թուականի եւ «Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ», խօսքերի վրա՝ կարմիր եռանկիւնու մէջ (գործարանի նշանը)։
ՄԵԾ ԳԱՆԱՊՈՒԹԵՄԲ ԾԱԽՍ ԿԱՏԱՐՈՒՄ Է
„ՎԷՕՊՕԼԴ ՆԷՑՇԷԼԷՐ“ առեւտրական տունը
Ս.-Պետերբուրգում, Մոսկվայում, Ռիգայում, Օդեսայում, ՐՕՍՏՕՎՈՒՄ ԴՕՆԻ ՎՐԱ Եկատերինբուրգում, Իրկուտսկում եւ Խարկովում.
16—85

Дозволено Цензурою, Тифлисъ, 12 Декабря 1902 г. Электропечная Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.